ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 375-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՑ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, 10.06.2008թ.<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ-117-Ն օրենքով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀկառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով, որ հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,չի հակասում քաղաքաշինական նորմերին,չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, տրված՝ 31.03.2016թ. /գրանցված է սեղանամատյանում N 585,գործ թիվ 59, և քաղաքացի Վալերիկ Ղուրբանի Գևորգյանի /մուտք՝ 23.11.2023թ. թիվ 681/ դիմումը՝
Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Վալերիկ Ղուրբանի Գևորգյանի/ծնված՝ 01.08.1967թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Մարց, 2-րդ փողոց, թիվ 9 հասցեի 06-071-0026-0008 ծածկագրում գտնվող բնակելի տան,օժանդակ շինությունների և 0,14231 հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ:
2 Վերականգնել և ճանաչել Վալերիկ Ղուրբանի Գևորգյանի/ծնված՝ 01.08.1967թ./սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Մարց,06-071-0106-0027 ծածկագրում գտնվող 0,398 հա մակերեսով խոտհարքի նկատմամբ:
3. Վերականգնել և ճանաչել Վալերիկ Ղուրբանի Գևորգյանի/ծնված՝ 01.08.1967թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Մարց,06-071-0126-0017 ծածկագրում գտնվող 0,157հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
4. Վերականգնել և ճանաչել Վալերիկ Ղուրբանի Գևորգյանի/ծնված՝ 01.08.1967թ./սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Մարց, 06-071-0126-0134 ծածկագրումգտնվող 0,19 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
5. Վերականգնել և ճանաչել Վալերիկ Ղուրբանի Գևորգյանի/ծնված՝ 01.08.1967թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Մարց,06-071-0126-0133 ծածկագրում գտնվող 0,3հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
6. 06-071-0026-0008 ծածկագրում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Մարց 2-րդ փողոց, 9 բնակելի տուն>> հասցե:
7. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:

8. Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
9. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:
10.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 05.12.2023թ. թիվ 405-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. սեպտեմբերի 18
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 376-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Արմիկ Անաստասի Ջանվելյանի դիմումը և համայնքային ծառայության առաջատար մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1. Լոռու մարզի Թումանյան համայնքի Աթան գյուղի կադաստրային քարտեզի 06-011-0011-0008 ծածկագրի անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Աթան, 2-րդ փողոց, 8/1 հողամաս:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. սեպտեմբերի 18
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 377-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով ,հիմք ընդունելով ԱրմիկԱնաստասիՋանվելյանիդիմումը և համայնքային ծառայության առաջատար մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1. Լոռու մարզի Թումանյան համայնքի Աթան գյուղի կադաստրային քարտեզի 06-011-0011-0007 ծածկագրի անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Աթան, 2-րդ փողոց, 8 բնակելի տուն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 23.08.2024թ. թիվ 340-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. սեպտեմբերի 18
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 378-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով , հիմք ընդունելով Անդրանիկ Մխիթարի Խաչատրյանի դիմումը և համայնքային ծառայության առաջատար մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1. Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0001-0004 ծածկագրի անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Դսեղ, 9-րդ փողոց, 8 բնակելի տուն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. սեպտեմբերի 18
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 379-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24–Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝
Որոշում եմ.

1.2024 թվականի սեպտեմբերի 24-ին ժամը 11-00-ին ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Շամուտի հիմնական դպրոցում, գումարել Թումանյան համայնքի ավագանու արտահերթ նիստ,հետևյալ օրակարգով.
1) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2024թ. սեպտեմբերի 24-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին
2) Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի, Թումանյան համայնքի, սեփականություն հանդիսացող Մարց գյուղի վարչական տարածքում գտնվող 06-071-0101-0014 ծածկագրի 0.11279 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության հողամասը մրցույթով, վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին
3) Թումանյան քաղաքի 06-004-0015-0058 ծածկագրի 0.005739 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
4) Հողամասի նպատակային նշանակության փոխելու մասին
5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արոտներից և այլ հողերից 2757,0 հա մակերեսով հողամասը սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին
7) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթը (գոտիավորման մասով) հաստատելու մասին
8) Թումանյան համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 7-ի N 80-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
9) Թումանյան համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 26-ի N 81-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
10) Թումանյան համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը որոշելու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24թ. սեպտեմբերի 20
ք.Թումանյան